Մրցույթ՝ ՀՀ Արագածոտն մարզի «Արագածի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի թափուր տեղի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման-շաբաթական 6 ժամ:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարերի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկլացողները հանձնաժողով են ներկայացնում հատկյալ փաստաթղթերը՝

1.հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2.փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.անձնագրի պատճենը,

4.աշխատանքային գրքույկի պատճենը,

5.Ինքնակենսագրություն (Ձև 4),

6.թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճեները (դրանց առկայության) դեպքում,

7.մեկ լուսանկար՝ 3X4,

8.այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք,

9.ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ,

10.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում),

11.որակավորման տարակարգ (առկայության դեպքում):

Փաստաթղթերի պատճեներ պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, ինչից հետո բնօրինակները վերադարձնում է մասնակցին:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև մարտի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից մինչև 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թ. մարտի 25-ին՝ ժամը 14:00-ին**, Արագածի թիվ 2 միջնակարգ դպրոցում: Տեղեկությունների համար զանգահարել՝ 055-11-18-89 հեռախոսահամարով: